ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

2025 թ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին 4

Ռազմավարական նպատակներ 8

Գործունեություն 9

- Օրենսդրական առաջարկություններ և ջատագովություն 9
- Հետազոտություններ 10
- Լրագրողական հետաքննություններ 11

Դիտորդական առաքելություն 12

Գիտելիք և առաջնորդություն 13

Իրազեկում 15

Ամալյա Կոստանյանի անվան մրցանակ 16

Գործընկերներ/Համագործակցություններ 17

Եկամուտներ և ծախսեր 18

Աուդիտ 21

ՄԵՆՔ 25 ՏԱՐԵԿԱՆ ԵՆՔ

Կոռուպցիան շարունակում է մնալ լուրջ մարտահրավեր՝ խաթարելով ժողովրդավարության հիմքերը, հանրային վստահությունը և կայուն զարգացումը:

Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն բարեփոխումները կարևոր են, սակայն դրանց արդյունքները դեռևս լիարժեք տեսանելի չեն, իսկ հակակոռուպցիոն համակարգի արդյունավետության նկատմամբ հանրային վստահությունը շարունակում է մնալ խոցելի:

Այս համատեքստում առավել ընդգծվում է լավ կառավարման և ժողովրդավարական գործընթացների խթանման կարևորությունը՝ հանուն պետականության ամրապնդման և կոռուպցիայից զերծ Հայաստանի: Այս արժեքներով է առաջնորդվել Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը վերջին 25 տարիների ընթացքում:

Մենք շարունակելու ենք մեր հետևողական աշխատանքը՝ նպաստելով համակարգային բարեփոխումներին, հանրային վերահսկողության ուժեղացմանը և թափանցիկ ու պատասխանատու կառավարման ձևավորմանը: Համոզված ենք, որ միայն ժողովրդավարական արժեքների ամրապնդումը կարող է ապահովել արդար, կայուն և կոռուպցիայից զերծ Հայաստան:

Սոնա Այվազյան
ԹԻՀԿ գործադիր տնօրեն



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Խթանել լավ կառավարման և ժողովրդավարական գործընթացները՝ հանուն պետականության ամրապնդման և կոռուպցիայից զերծ Հայաստանի:

ԱՐԺԵՔՆԵՐ

- Ժողովրդավարություն
- Թափանցիկություն
- Հաշվետվողականություն
- Արդարություն
- Օրինավորություն
- Համարձակություն

ՄԵՆՔ ԹՎԵՐՈՎ

ՄԻՆՉ ՕՐՍ

140+	250+	120+	430+	5900+	5100+	9100+
ծրագիր	հրապարակում	իրավական առաջարկների փաթեթ	հայտարարություն և դիրքորոշում	հակակոռուպցիոն կրթության մասնակից	ընտրությունների դիտորդ	հանրային քննարկման մասնակից

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

Սոնա Այվազյան

ԽՈՐՀՈՒՐԴ

Արսեն Խառատյան
Խորհրդի նախագահ

Իզաբելլա Սարգսյան

Արմեն Օհանյան

Ինգա Զարաֆյան

Զարուհի Հովհաննիսյան

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Լուսինե Խառատյան
Հանձնաժողովի նախագահ

Վազգեն Կարապետյան

Մարիամ Հովեյան

33 ԱՆԴԱՄ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

3 ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ԹԻՄ

Սոնա Այվազյան

Գործադիր տնօրեն

Ամալյա Ումուրշադյան

Դրամաշնորհների կառավարիչ

Անահիտ Հովակիմյան

Ծրագրի համակարգող

Աննա Կռոյան

Իրավաբան

Անուշ Հակոբյան

Իրավական հարցերով փորձագետ

Արաքսյա Խաչատրյան

Ֆինանսական օգնական

Արեն Մանուկյան

Ծրագրի ղեկավար

Արմեն Խուդավերդյան

Հանրային կառավարման գծով խորհրդատու

Արմինե Թոխմախյան

Հաղորդակցության համակարգող

Գոհար Հայրյան

Գլխավոր հաշվապահ

Լուսինե Ստեփանյան

Գործառնական գծով կառավարիչ

Մարիամ Հովեյան

Ընտրական ծրագրերի տնօրեն

Մերի Մինասյան

Ծրագրի համակարգող

Միհրան Բուլղադարյան

Իրավաբան

Նարինե Նուշերվանյան

Գրասենյակի կառավարիչ

Շուշանիկ Ավագյան

Ծրագրի համակարգող

Վարուժան Հոկտանյան

Հակակոռուպցիոն փորձագետ

Տաթևիկ Մարգարյան

ՔՀԿ հարցերով փորձագետ

Տիգրան Մուղնեցյան

Հետազոտող/ հանրային քաղաքանության վերլուծաբան

Քրիստինե Մարգարյան

Զարգացման գծով տնօրեն

ԿԱՄԱՎՈՐ

Հայկ Խաչատրյան

Հայաստան

ՌԱՁՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Կոռուպցիայի կանխարգելում

Աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության, կոռուպցիոն ռիսկերը կանխարգելող օրենսդրության մշակմանը և խթանել հանրային ոլորտում բարեվարքության ինստիտուտների և կոռուպցիան կանխարգելող մեխանիզմների կայացմանը

Իրավունք և կիրարկում

Հետամուտ լինել իրավակիրառ պրակտիկային և ապօրինի գույքի վերադարձի և պատասխանատվության ենթարկման գործընթացին, աջակցել քաղաքացիներին հանրային շահի պաշտպանության գործընթացներում

Հանրային ռեսուրսներ և ծառայություններ

Նպաստել հանրային ունեցվածքի արդյունավետ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը, հանրային ծառայությունների որակի բարելավմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը

Քաղաքական համակարգ և ընտրություններ

Նպաստել ազատ և արդար ընտրությունների իրականացմանը, կուսակցությունների ինստիտուտի կայացմանը և թափանցիկության բարելավմանը

Գիտելիք և առաջնորդություն

Խթանել քաղաքացիական ու հակակոռուպցիոն գիտելիքը և արժեքների ձևավորումը

Քաղաքացիական տարածք և ներգրավում

Նպաստել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների իրավական ու գործնական միջավայրի բարելավմանը

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ

Գործընկերների հետ ներկայացվել են առաջարկություններ հետևյալ ոլորտներում՝

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

- Հանրային ծառայության մասին օրենք. հայտարարատուների շրջանակի ընդլայնում
- Հանրային ծառայության մասին օրենք. լոբբիստական գործունեություն
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման ընթացակարգ
- Իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության ընթացակարգ
- Հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներ. ՀՀ նախարարությունների հասարակական խորհուրդներ
- Հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներ. ռազմավարական կառավարման համակարգ

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿԻՐԱՐԿՈՒՄ

- Ազդարարման համակարգ
- Վարչական դատավարության օրենսգիրք
- Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեություն
- Քրեական դատավարության օրենսգիրք
- Ընտրական օրենսգիրք

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Հանրային գնումների ընթացակարգեր
- Շահերի բախման կարգավորումները հանրային գնումներում
- Անկանխիկ գործառնություններ
- Երևանի քաղաքապետարանի գործունեություն
- Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին օրենք
- Հանրային գերակա շահ

2025թ. հունվարին Վերաքննիչ վարչական դատարանը մերժեց ՀՀ ԱԺ աշխատակազմի վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ թողնելով հօգուտ ԹԻՀԿ-ի կայացված Վարչական դատարանի վճիռը: Դատարանը վերահաստատեց, որ ԹԻՀԿ-ի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության մրցույթի հարցազրույցի փուլին մասնակցությունը մերժելով՝ խախտվել է կազմակերպության՝ Սահմանադրությամբ երաշխավորված տեղեկություն ստանալու իրավունքը:

ԹԻՀԿ-ի շահերը դատարանում ներկայացրել են Իրավունքի կարգացման և պաշտպանության հիմնադրամի իրավաբանները:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոռուպցիայի կանխարգելում

Հանրային ռեսուրսներ և ծառայություններ

Քաղաքական համակարգ և ընտրություններ

ՔՀԿ տարածք



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԻՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԵՆ ՆԱՁԱՐՅԱՆ

- Ինչպե՞ս են վաճառվել ուրիշների գերեզմանները
- Ջրանջատումներ, հոսանքազրկումներ և գազի անբավարարություն

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

- Եկամտահարկը և շինարարական խնդիրները Երևանում
- Շինարարական տուգանքների ծավալն աճել է

ՔՐԻՍՏԻՆԵ ԱՂԱԼԱՐՅԱՆ

- Ինչու՞ չի կառուցվում «Հին Երևանի» հուշարձանների թաղամասը
- «Հին Երևանից» մինչև Սահմանադրական դատարան

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիտարկվել է Գյումրի և Վաղարշապատ համայնքներիի ՏԻՄ ընտրությունները

4 ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԴԻՏՈՐԴ

30 ՇՐՋԻԿ ԴԻՏՈՐԴ

129 ՏԵՂԱՄԱՍ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Միջազգային դիտորդություն և ուսումնական այցեր

- Գերմանիա
- Բելգիա
- Լիտվա
- Կոսովո
- Քենիա
- Մոլդովա
- Իսպանիա

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

6
ԴԱՍԸՆԹԱՑ

128
ՄԱՍՆԱԿԻՑ

89 կին

39 տղամարդ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ

25
ուսուցչի ուսումնական այց ԿԿՀ

179
աշակերտի ուսումնական այց ԹԻՀԿ գրասենյակ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՌՑԱՆՑ ԱԿԱԴԵՄԻԱ

68 դիմորդ

↓

15
հավաստագիր

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

2 ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՊՐՈՑ

47 ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ԱՐԵՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
ՀՐԱՉՈՒՀԻ ՄԱԹՈՍՅԱՆ
ՍԻՐԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Լուռ կոռուպցիա» ֆիլմաշար
Ընտրակաշառք | Վարչական ռեսուրս

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Կոռուպցիա-կոռուպցիա» սեղանի ուսուցողական խաղ

ԻՐԱՑԵԿՈՒՄ

6
ՔՆՆԱՐԿՈՒՄ

293
ՄԱՍՆԱԿԻՑ

163 կին

130 տղամարդ

27
հարցազրույց

16
դիրքորոշում, հայտարարություն

10
զեկույց, ձեռնարկ

ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐ

- Երևանի պատմամշակութային հուշարձաններ
- Երևանի կանաչ տարածքներ
- Հայաստանի ցուցանիշներ

ԱՄԱԼՅԱ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿ

2025թ-ին Ամալյա Կոստանյանի անվան մրցանակը շնորհվեց

- Օլեգ Դուլգարյանին հանրային շահի, մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում ունեցած նշանակալի ներդրման համար
- Մուշեղ Հովսեփյանին հանրային շահի պաշտպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների առաջմղման գործում ունեցած հետևողական ու սկզբունքային աշխատանքի համար:

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ/ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՂԱԿԱՆ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

«Ռեստարտ» գիտակրթական-բարեգործական հիմնադրամ

«ԿիբերՀաբ» ՀԿ

Կրթական քաղաքացիական նախաձեռնություն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ քարտուղարություն

Թրանսփարենսի Ինթերնեշնլ Միացյալ Թագավորություն

Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ (EPDE)

Ընտրությունների մոնիտորինգի կազմակերպությունների եվրոպական ցանց (ENEMO)

Ընտրությունների տեղական դիտորդների գլոբալ ցանց (GNDEM)

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL)

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» կոալիցիա (UNCA Coaltion)

Միջազգային բյուջետային գործընկերություն (IBP)

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՃԱԽՍԵՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ ԸՍՏ ՇՆՈՐՀԱՏՈՒՆԵՐԻ (ՀՀ ԴՐԱՄ)



182,817,863	Ինստիտուցիոնալ աջակցության դրամաշնորհ-Շվեդիայի Միջազգային Զարգացման համագործակցության գործակալություն (SIDA)
42,402,944	Ժողովրդավարության ազգային հիմնադրամ (NED)
21,059,749	Մեծ Բրիտանիայի դեսպանություն, Արտաքին գործերի, համագործակցության և զարգացման գրասենյակ (FCDO)
11,907,318	Եվրոպական միություն՝ Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոնի միջոցով (ECNL)
9,806,096	Եկամուտներ արտարժույթի փոխարկումներից և վերագնահատումից
9,185,386	Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն-2025
8,468,320	Սևծովյան վստահություն տարածաշրջանային համագործակցության համար (BST)
5,952,450	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ (DDF)
4,087,261	Երկարաժամկետ ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ
3,249,285	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն՝ ի դեմս Դեքսիսի (USAID Dexis)
1,905,984	Թրանսփարենսի Ինթերնեշնլ քարտուղարություն
1,708,483	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID /OCCRP)
1,649,077	Եկամուտներ ավանդներից
1,142,258	Ծառայությունների մատուցումից եկամուտներ (TI UK)
1,133,560	Այլ եկամուտներ
815,000	Թրանսփարենսի Ինթերնեշնլ ՄԹ (TI UK)
446,547	Հիվոս հիմնադրամ
373,100	Եկամուտներ անդամավճարներից

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՃԱԽՍԵՐ

ՃԱԽՍԵՐ՝ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ (ՀՀ ԴՐԱՄ)



- **182,817,863** Ինստիտուցիոնալ աջակցության դրամաշնորհ (SIDA)
- **25,466,927** Թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում Երևանի քաղաքապետարանում /2025-2027/ (NED)
- **21,059,749** Հայաստանում քաղաքական բարեվարքության ամրապնդում (FCDO)
- **16,936,017** Քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացում/2023-2025/ (NED)
- **11,907,318** ՔՀԿ չափիչ՝ նպաստավոր միջավայրի և ՔՀԿ-ների իրավազորման կողմնացույց (ECNL)
- **9,185,386** Ինստիտուցիոնալ աջակցության դրամաշնորհ (Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն)
- **8,468,320** Գյումրու արտահերթ ընտրությունների դիտարկում (BST)
- **6,478,872** Արտարժույթի փոխարկումից և վերագնահատումից ծախս
- **5,952,450** Ինստիտուցիոնալ արտակարգ աջակցություն
- **4,087,261** Երկարաժամկետ ակտիվներին վերաբերող շնորհներից ծախս
- **3,249,285** ՔՀԿ կարողությունների զարգացում՝ Հայաստանում բարեվարքության խթանման նպատակով (USAID Dexis)
- **1,905,984** Աջակցություն ԹԻ գլոբալ շարժման ազդեցության գնահատման համակարգին (TI-S)
- **1,800,522** Այլ ծախսեր
- **1,708,483** Հետաքննական լրագրության միջոցով թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդումը Եվրոպայում և Եվրասիայում (USAID /OCCRP)
- **883,750** Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը Հայաստանի պաշտպանության ոլորտում (TI UK)
- **815,000** Տեղեկատվության հասանելիության խթանումը պաշտպանության և անվտանգության ոլորտներում (TI UK)
- **446,547** Ենթակառուցվածքների հրատապ արդիականացում՝ թվային անվտանգության և գործառնական արդյունավետության ամրապնդման նպատակով (Hivos Foundation)
- **373,100** Ծախսեր անդամավճարներից

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՃԱԽՍԵՐ

ՃԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (ՀՀ ԴՐԱՄ)



- **112,939,180** «Ծրագրային աշխատակազմի համախառն աշխատավարձ»
- **67,232,408** Վարչական աշխատակազմի համախառն աշխատավարձ
- **37,207,697** Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված վճարներ
- **36,706,002** Վարչական ծախսեր
- **35,176,750** Ծրագրային ծախսեր
- **6,918,175** Համագործակիցների և ենթադրամաշնորհառուների կողմից իրականացված ծրագրային ծախսեր
- **6,478,872** Արտարժույթի փոխարկումից և վերագնահատումից ծախս
- **883,750** Ծառայությունների մատուցումից ծախսեր

ԱՈՒԴԻՏ

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանտ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
Հ.Լուսավորչի 9
Հ.Հ., Երևան 0015

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի
Ընդհանուր ժողովին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՀՄՍ) կողմից հրապարակված ՖՀՍՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը ըստ արժանի նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները)* (ՀԷՄՄՍ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՄՍ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Կազմակերպության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Grant Thornton

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՍՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ դեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատության վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանգավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն

Grant Thornton

դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

23 ապրիլի 2026թ.

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ

հակակոռուպցիոն կենտրոն

www.transparency.am

www.facebook.com/TIArmenia

@TI_Armenia

(+374 10) 569589, 569689

info@transparency.am